ԲԵՆԻԿ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

P/18
Գ-49

ԿՈՒՍԱԿՐՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ Է

100%
32482

ՍՆԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՆԵՅՈՒԹՅՈՒՆ ՉԷ

4267
4267

ՀԱՅ — ՍՍՌ Պետհրատի II-րդ տպարան
ԵՐԵՎԱՆ
1924.

Գրառեպվար № 1295 և 1296

ԿՈՒՍԱԿՐՈՆՈՒՈԹՅՈՒՆԸ ԱՆԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ Է

Հայ ժողովուրդ, լավ ուշք դարձրու այս վերնագրին և լսիր ինձ։

Քրիստոսը ամուսնական խնդիրը բոլորովին ազատ է թողել. ով կամենում է, պետք է ամուսնանա. ամուսնանալը լավ է պոռնկությունից։

Պողոս առաքյալն ասում է. «Ամեն մարդ թող իր կինն ունենա, վոր չը պոռնկանա»։ Նույն առաքյալը. «Ով վոր ժուժկալ մնալ չի կարող, թող ամուսնանա. վորովհետև ավելի լավ է ամուսնանալ, քան վառվել»։

«Յեպիսկոպոսին վայել է, վոր մի կին ունենա»։

«Ամուսնությունը ամեն կողմից պատվական է և անկողինը սուրբ»։

«Ամուսնությունը Աստծու արքայության համար առաքինություններ սովորեցնող մի դպրոց է» (Տերտուղիանոս)։

«Ամուրիությունը հակառակ է բնական որինաց. յեկեղեցին ընկել է ծայրահեղության մեջ՝ բնավ չամուսնանալ» (Ներսես արքեպ. Մելիք-Թանդյան)։

«Յեպիսկոպոս, յերեց կամ սարկավագ չը հեռացնեն իրենց կնոջը յերկյուղածության պատճառով. յեթե կը հեռացնեն մերժվեն յեկեղեցուց. իսկ յեթե համառին, թող կարգալույծ լինեն»։ (Առաքելական կանոն 5-րդ հոդված)։

«Յեթե յեպիսկոպոսը, յերեցը կամ սարկավագը կը հրաժարվեն ամուսնությունից, մսից, գինուց, վոչ թե ժուժկալության համար, այլ պիղծ համարելով և անարգելով արարչագործությունը, դրանք կամ ուղըրվեն կամ կարգալույծ լինեն»։ (Առաքել. կանոն 46-ղդ հոդված)։

«Նիկիո տիյեզերական ժողովում վորոշվում է յեղեցականների ամուսնությունը ազատ թողնել, ով կամենում է թող ամուսնանա»։ (Սոկ. յեկ. պատմ.)։

Հայոց յեկեղեցին յեկեղեցականների ամուրիությունն չեր ճանաչում մինչև V դարը։ Հայոց կաթողիկոսներն ամուսնավոր եյին։ Խաղ յեպիսկոպոսը, վորին՝ իբրև սուրբի, յեկեղեցին տոնում է, ամուսնացած եր։ Նրա աղջիկը Ապահունյաց իշխանի կինն եր։

Մեր յեկեղեցին պաշտոնական վորոշում չունի ամուրիության համար։ Այդ հակաբնական կանոնը մտել է մեր յեկեղեցին հունաց ազդեցությամբ։

Ամուրիությունը մտել է քրիստոնեական պաշտոնական յեկեղեցու մեջ հեթանոսությունից՝ Միհրական կրոնից, Հռոմի Վեստալյան կույսերի ամուրիությունից, հնդկական կրոններից։

Իսկ քրիստոսը կործանել է բոլոր հեթանոսական կրոնները։

Կուսակրոնությունը հակաբնական է, և դարձել է անառակության աղբյուր։

Յերբ յեկեղեցական ամուրիությունը հայոց մեջ մտավ, նույն յեկեղեցու մեջն էլ բուն դրեց անառակությունը։ Այդ պարզապես յերևում է յեկեղեցական այն բազմաթիվ պատժական որենքներից, վոր սահմանված են անառակ յեպիսկոպոսների և վարդապետների համար։

Սակայն վերջին ժամանակներում հայոց յեկեղեցու ամուրիությունը լիսի անառակություն է դարձել, իսկ վանքերը՝ անառակության շկոլա, վորտեղից անառակությունը ծավալվում է հայ ժողովրդի մեջ։

Այդ ասիճանի լիսի անառակության դեմ բազմաթիվ ձայներ լսվեցին։ Մի քանի տարի առաջ յեկեղեցական ժողովի մի փորձ յեղավ Եջմիածնում. ժողովականների մեջ ձայներ բարձրացան ամուրիության դեմ. պահանջ դրին վերացնել ամուրիությունը. Թիֆլիսի քահանայությունը իր ժողովներում վորոշել եր ամուրիությանը վերջ տալ և տպագրված վորոշումը ուղարկել եր Եջմիածին։

Սակայն բազմակնության սովոր ամուրիները խեղդեցին այդ ձայները յեվ բարեփոխությունը չանցավ։

Հին վանականությունը ամուրիության հետևանքով և կանանց սակավ այցելությամբ վանքերին տարված եր հակաբնական ախտերով, վորի պատճառով շատերը խեղանդամ եյին դառնում, մեջքի ուղեղի չոքացումով (сухотка) և վոտների անդամալուծությամբ քարշ եյին տալիս իրենց թշվառ գոյությունը մինչև վաղահաս գերեզման։ Արվամոլությունը ընդունված բարք դարձավ վանքերում և անմեղ ու մոլորված պատանիները հասակն առնելով արյունարբու թշնամի դարձան վանքերին ու վանականներին. մեղավոր չեն վանքերում դաստիարակություն և ուսում ստացած տղայքը վոր այսոր թքում են վանականների յերեսին և իրենց պրոպագանդան ուղղում վանական կյանքի դեմ։

Դրանցից մինը՝ Ճեմարանի մի աշակերտ, պատվի, զգացմունքի զարգացումով, չը կարողացավ տանել ընկերների ակնարկները իր ախուր պատանեկության մասին և Ճեմարանի յերկրորդ հարկի լուսամուտից իրեն ձգեց, ջարդ ու փշուր յեղավ և մեռավ։

Ավելի պակաս մոլի վանականները հակաբնական ախտերից հեռու մնալու համար, ավելի բնականին եյին դիմում։ Լեգենդա չե, վոր Եջմիածնի շենքերի պարիսպներից վեշերները, յերբ դարպասները փակ եյին լինում, պարանով կապած կողովով կանայք եյին քաշվում պարիսպների վրայով դեպի վեր. լեգեն-

դա չէ, վոր յափունջիներում կոլոլված, փափախներով ծածկված կանայք մթանը վանական խցերն եյին մտնում։

Իրականություն է, վոր 90-ական թվականների նոր սերունդը, ունևորները, Թիֆլիսից հեռագրով անբարո կանայք եյին պատվիրում և «դրախտի գիշերներ» սարքում Վեհարանին կից Լաբյուրինթոս սենյակներում։ Բանն այնտեղ հասավ, վոր իր մաքրությունը պահած Տաճատ վարդապետը (հետո վերարկուն հանեց) ատրճանակով եր սպառնում այդպիսիներին և վախեցնում կանանց։

Վերջին տասնամյակներում յերբ վանքն այլևս վանք չէ, ամենաուժեղ հոսանքը դեպի վանքը կանանց հոսանքն է. անառակությունն սկսավ սանձարձակ դառնալ։

Լենինականի մի քահանա բողոքել եր սինոդին իր վատավարկ կնոջ դեմ և խնդրել եր լուծել իր ամուսնությունը. կինը վրեժ առավ բոլոր վանական ջոջերից. բոլորին այցելեց. նրան ջոջ սուրբերը սիրով ընդունեցին. «մատաղն իր վոտքովն է յեկել»։ Ցեվ հանկարծ 2-3 ամիս վանականները ժամ չեյին գալիս, հիվանդ եյին։ Ի՞նչ եր յեղել. վոչինչ. «քամին տվել, մրսել եյին...» Այս դեպքի մասին յես ժամանակին գրել եմ, և ավելացրել. «Ամուսնությունը, սերը արգելված է Եջմիածնի համար, իսկ պոռնկությունը իրավունք է»։

Ահա մի յեպիսկոպոս, վորի մոտ շաբաթը յերկու անգամ կառքով մի-մի կին եր գալիս մոտակա Ռ. գյուղից։ Կառքը գալիս վանականները սովոր եյին ասել. «Վանքի հարսը յեկավ»։ Ցեվ այդ վոզորմելի «վանքի հարսին» վերջիվերջո ազգականները քարշ տվին տարան Հռեփսիմեյի վանքի պարիսպների տակ և սպանեցին։

Ահա մի յեպիսկոպոս ճանկել եր մի անմեղ սիրուն աղջիկ Նվարդ անունով, իբրև աղախին. նա այդ յեպիսկոպոսի մոտ փչացավ, նրանից եկ հիվանդացավ. տեղափոխվեց մի վարդապետի մոտ և ինչ վոր ստացել եր յեպիսկոպոսից, իրավամբ հաղորդեց վարդապետին։ Վարդ ու Նվարդ քեֆ քաշեցին, բայց մի քանի ամսից հետո այդպիսիներին գթացող Եջմիածինը իր «սխալական» վարդապետին Թիֆլիս ուղարկեց բժշկվելու ութն ամսով։ Աղջիկը մարդու գնաց. լսեցի, բացվել է բունը, հայտնողն յեղել է հիվանդությունը և աղջկան մարդը սրախողող է արել։

Ահա մի ուրիշ վարդապետ, վորին Նոր-Բայազեդում մի մեծ ընթրիքի ժամանակ մի զինվորական թուրը հանած փախցրեց սեղանից. վարդապետը վեղարը թողած փողոցն ընկավ ու ազատվեց. ի՞նչ եր յեղել. հենց սեղանի վրա լավ չեր պահել իրեն սպայի կնոջ նկատմամբ։

Նույն վարդապետին յերկու տարի առաջ Կիսլավոդսկի յեկեղեցում, պատարագի ժամանակ մի տղամարդ ջարդեց փայտով, նրա խաղերի համար կնոջ հետ։ Վարդապետը փախավ տեղից, վեղարը հանեց ղրկեց Եջմիածին, աշխարհականացավ. անցավ Նախիջևան, նշանվեց այս եկ անհաջող անցավ, վերստին վանք յեկավ, վեղարն առավ և «Գերագույն Խորհրդի» սիրելին դառավ։

Ահա մի յեպիսկոպոս, վորին Վաղարշապատի այգիներից մեկում մի գաղթական կնոջ հետ բռնեցին հանցանքի մեջ այգու հարևանները և թքեցին յերեսին։

Նույնի փորում մի յեղան ցցելու փորձն արավ մի տղա «սրբազանի» աղախնոց պատճառով, բայց չը թողին։

Նույն յեպիսկոպոսը ամենահայտնի անբարոյական կանանց ընդունում և ճանապարհ դնելիս, որը ցերեկով, ափաշկարա մի-մի մեշոկ ցորեն դնում կնոջ բերած ծառայի շալակին ու ղրկում։

Այս մարդու համար չարաճճի պատանիները մի զատկական նվեր եյին տվել յերկտողով ու կպցրել նրա պատին, վոր հետեյալն ե. «Համ աքլոր յես, համ հավ ես,—պառավ տեսնես կամաչես, աղջիկ տեսնես՝ կը կանչես»։ Տարիներ առաջ Եջմիածնում մի խումբ լվացարար ռուս կանայք կային. վանականներն իրենց լվացքի անունով հրավիրում եյին նրանց. բարձրացավ մի մեծ խայտառակություն, գործը հասավ գավառապետին, վորը «բարի յեղավ խնայելու վանականներին, վոր որենքով արտոնյալ եյին»։

Ահա մի տարեց վարդապետ վորի կյանքը միայն անառակությամբ ե անցել։ Յես և Հուսիկ վարդապետը (այժմ յեպիսկ.) վկա յեղանք թե ինչպես իրար ծեծեցին «առաքինի» վարդապետն ու պոռնիկ կինը, վորը պահանջում եր իր բարձերն ու «վարձը»։ Յես առ ամոթս սպառնացի կնոջը և հագիվ դուրս քշեցի վանքից։

Ահա մի յեպիսկոպոս՝ վորին մի աղջկա աղգականները (ինչպես քննության ժամանակ լսվում եր) զարկեցին դաշույնով ուղղակի սրտի մեջ և յեթե դաշույնի ծայրը ուժեղ յեպիսկոպոսի հաստ կողի վրա կոտրված չը լիներ, նա մեռած պիտի լիներ։

Կարճում եմ որինակները, վոր մեկն ասեմ։

Անառակության առատ հունձ եր տալիս և «ամուսնալուծությունը»։ Պառակված ամուսինները դիմում եյին սինոդ և ապահարզան եյին պահանջում. նրանց գործը ձգձգվում եր տարիներով, տասնյակ տարիներով։ Խնդրատուներն ստիպված եյին լինում անձամբ Եջմիածին գալ աշխատելու։ Յեթե կինը գեղեցիկ եր, գեղեցկությունն եր հաղթում, իրավունք տանում կրկին ամուսնանալու. յեթե գեղեցիկ չեր և մարդը հարուստ եր, հարստությունն եր արդարանում։

Յեվ սինոդի մեջ աշխատանքները բաժանելիս, սինոդականները ամուսնալուծական գործերի սեղանի վրա գլուխ եյին կոտրում, վոր այդ մասն իրենց ընկնի։

Մի ամուսնալուծական գործում, սինոդը արդար և ճանաչում մարդուն. շքեղ կինը շտապում ե Եջմիածին, յերկու որ ու գիշեր հյուր լինում սինոդի նախագահին և ահա յերրորդ որը նոր վճիռ։ Կինն անմեղ ե, իրավունք տալ ամուսնանալու, մարդուն զրկել կրկնամուսնությունից։

Մի ամուսնալուծական գործի համար մի յերիտասարդ կնոջ վիճակվում ե Եջմիածին գալ իր ազգականի և նոր նշանածի հետ. ծանոթ վարդապետներից մինը (այժմ յեպիսկոպոս) խոստումն ե անում սինոդում աջակցել գործի հաջող յելքին։ Փաստերը քացարձակ անմեղ են ճանաչում կնոջ։ Կինը հեռանալիս քաղաքավարական պարտք ե համարում մտնել վարդապետի տունը շնորհակալություն անելու։ Վարդապետը իր աշխատանքի վարձն ե խնդրում, միամիտ կինն ասում ե. «փող չունիմ մոտս, ուրախությամբ կը գրեմ հորս և նա ձեզ կուղարկի հարյուր ռուբլի»։

— Վշշ, իմ խնդրածս փողը չե, ասում ե վարդապետը ու չոքելով գրկում գեղեցկուհու վոտները։ Սակայն այս անգամ իր սովորական հաշվի մեջ սխալվում ե «կուսակրոն» հերոսը. կինը թքում ե չոքած աղոթավորի աչքի մեջը, դոռում վրան, դուրս, գալիս, նշանածացուին պատմում, վորը կամենում ե մտնել վանականի մոտ և խեղդել, կինը չի թողնում և բավականանում են մի խայտառակ նամակով, վոր գրում ե տղան «սուրբ հորը»։

Վերջին ժամանակներս անառակությունը սիստեմների յե վերածված։ Կան վոր ամուսնացած ծառաներ յեն պահում հարաքաշ դառնում. կան վոր ջահել «աղախիներ» են պահում, շուտ-շուտ մարդու տալիս, կան ել վոր յերթևեկներ են ընդունում, կան ել վոր «ազգական», «յեղբոր աղջիկ», «քեռու թոռ» անուններով են սրբագործում պոռնկությունը։

Հայ ազգի թշվառությունը քաղցած, աղքատ գաղթական աղջիկներով ու կանանցով լցրեց վանքը։ Ստեղծվեց աղախիների սիստեմը։

Բանն այնպիսի ծավալ ստացավ, վոր Թ. Թադեոսյանը «Հորիզոն»-ում մի հոդված տպեց և Եջմիածինն անվանեց «մեծ անառականոց»։ Կաթողիկոսն այս հոդվածի տպավորության տակ մի խիստ հրաման արձակեց «Վանական Խորհրդին»՝ յերեք որվա ընթացքում հեռացնել վանքից բոլոր կանանց և աղախիներին։ Սակայն այդ ջոջերը, վոր այժմ հլու հնազանդություն են պահանջում ստորադրյալ վարդապետներից, և վոչ մեկը «աղախին» հեռացրեց և բանի տեղ չդրեց կաթողիկոսի հրամանը։ Այդ 1920 թ. եր։

Այժմյան վանական կյանքին և աշխարհայացքին «կուսակրոն» բառը անախրոնիզմ է, անպատշաճ և կեղծիք։ Այդ ամբողջ վանականության համոզմունքն է, ամենափոքրից սկսած մինչև ամենամեծը։

Խրիմյան կաթողիկոսը միշտ դեմ եր արտահայտվում կուսակրոնությանը և ծաղրում։ Իզմիրլյան կաթողիկոսն ասում եր. «Իբրև անհատ մը, իբրև Իզմիրլյան կընդունեմ, վոր ամուրիությունը անառակություն կը տրամադրե, բայց իբրև կաթողիկոս, չեմ կրնար փոխել այդ կարգը. այդ ազգային ժողովի գործ է»։

Գեորգ Ե. կաթողիկոսը քահանաների կրկնամուսնություն մտցրեց առանց ազգ.-յեկեղ. ժողովի և լավ արեց, վորպեսզի այրի քահանաներին անառակությունից ազատի և զավակներին փրկի գեշ ազդեցություններից։

Անառակության հետ սերտ կապված է թալանը, գողությունը։ Հասկանալի յե թե թալանն ուր է գնում։

Հայ ժողովուրդ, չարախնդություն չէ, վոր ինձ ստիպում է գրել այս տողերը. յերբեք։ Այդպես ել պիտի լիներ, քանի կեղծ կուսակրոնությունը կա, շատ ել չեմ մեղադրում ամուրի անառակներին։ Բնախոսականի վերաբերմամբ մարդը նման է անասունին. նա իր հատուկ մսուրը պիտի ունենա, վոր քիթը չը խոթի ուրիշի մսրի մեջ։

Դու, հայ ժողովուրդ, կենդանի յեկեղեցին դու յես, վերջ տուր այս ՀՆԱՍԱԲԵՐ ամուրիությանը, ինչպես վերջ տվին անգլիական, գերմանական, շվեյցարական և այժմ ռուսական «կենդանի» յեկեղեցիները։

Յես ցավում եմ կեղծիքի վրա, վոր անբարոյականություն է, վոր վիրավորում է ինձ խորապես. ցավում եմ քո տղա ու աղջիկ զավակների վրա, վորոնք տգեղ բարքեր են տանելու վանքերից դեպի կյանք։ Պաշտպանիր զավակներիդ պատիվը, բարոյականը. հեռացրու նրանց վանքերից և շտապիր վռնդել դարշ ամուրիությունն այն տեղերից։

Ճշմարիտն եմ ասում, յեթե հարաբերական սրբության մաքրություն կա վանքերում, ելի նրանց մեջն է, վորոնք տասնյակ տարիներով մի կին ունին, վորդիք ունին, ընտանիք են կազմում, ամուսնավոր են։ Նրանք միայն բնական մահով են մեռնելու, մինչդեռ «ամուրի» վանականների 80%-ը վեներական ախտերով են տափ մտնում։

Ամեն տեղից ձեն տուր ու կանչիր, հայ ժողովուրդ։

Թող կորչի ամուրիությունը յեկեղեցուց.

Թող կորչի պղծությունը խցերի, խորանների, տաճարների.

Թող կորչի անառակ վանականությունը։

ՍՆԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՆԵՅՈՒԹՅՈՒՆ ՉԷ

Ավետարանի կրոնը սոցիալական պարտաճանաչության կրոն է. այսինքն՝ մարդու մեջ այն գիտակցությունը և զգացմունքը պիտի պաշտվի, որով մարդ պարտավոր է զգում իրեն իր նման մարդուն ծառայելու։

Այս պարտաճանաչությամբ վոգևորվելու և գործով արդյունավորելու վառ ձգտումն է իսկական կրոնը։ Այս կրոնը հասկանալի յե միայն սիրով դեպի մարդը. սերն է պսակում քրիստոնեությունը։

Իսկ ինչ վոր լոկ ձև է, ծես է, արարողություն, մարդկային բանականության հակառակ խոսք, այն քրիստոնեություն չէ, այլ մոլորություն, ապիտություն, սնահավատություն, անապաշտություն։

Ուր սնապաշտություն կա, այնտեղ մաքուր քրիստոնեություն չը կա։ Սնահավատության մեջ մեռնում է քրիստոնեությունը։

Սնահավատության դեմ կռվելը նշանակում է կռվել ապիտության դեմ հոգուտ քրիստոնեական կրոնի և մարդկության։

Հայոց յեկեղեցին իր հին շրջանում կռվել է սնահավատության դեմ՝ կախարդության, մոգության, վրեժխնդրության, գրբացության և այլն, վորոնք հին հեթանոսական կրոնների մնացորդներն են քրիստոնեության մեջ։ Հայոց յեկեղեցին նույն իսկ պատժական որենքներ ունի այդ և նման մոլորությունների դեմ։

Սակայն վերջին ժամանակներում սնահավատությունը վոչ միայն վիշտ չի պատճառում յեկեղեցուն, այլ մինչև անգամ քաջալերություն և դանում. իբրև կանոն մտել է հետին դարերի «Մաշտոցների» մեջ, ու սրբագործվել վորպես կրոնի մասն։

Այդպիսի ծիսարանը նախատինք է ավետարանի մաքուր ուսման։

Բացեք մեր յեկեղեցու Մաշտոցը՝ ծեսարանը և դուք կը գտնեք այսպիսի կանոններ.

1. Կանոն գիշերվա աղոթքի, վոր կատարվում է ծանր հիվանդների վրա, վոր ցավից բժշկվեն և մեղքերից ազատվեն։
2. Կանոն խաչալվա անելու բոլոր մարդկանց, վոչխարների, բույսերի և տունկերի բժշկության համար։
3. Կանոն դժվարածին՝ հղի կնոջ։
4. Կանոն նորածին մանկան տունը փարատելու։
5. Կանոն դիվահարներին, լուսնոտներին բժշկելու համար։
6. Կանոն սկիհ և մաղմա որհնելու։
7. Կանոն ժամի զգեստ որհնելու։
8. Կանոն գիրք որհնելու։
9. Կանոն աղ որհնելու։
10. Կանոն մատաղ որհնելու։
11. Կանոն զանգակ, քշոց որհնելու։
12. Կանոն ջրհոր որհնելու։
13. Կանոն սերմ, շեղջ, կալ, այգի, հնձան որհնելու։
14. Կանոն յերաշտի։
15. Կանոն գլուխ կնդելու և այլն։

Պարզ է վոր այս «կանոններով» ներշնչում են ժողովրդին թե կարդալով կարելի յե հիվանդին բժշկել և մեղքերից էլ ազատել, բժշկություն պետք չէ. հիվանդ բույսերն ու տունկերը աղոթքով կարելի է բուժել, ուրեմն դարմանել պետք չէ. հղի կնոջ դժվարածնությունից աղոթքով կարելի յե ազատել, ուրեմն բըժիշկ և տատմեր պետք չեն. նորածին մանկան տունը, վոր որհնեն, սատանաները կը փախչեն և յերեխան

անվնաս կը մնա։ Աղոթքով կարելի է հոգեկան հիվանդներին, ընկնավորներին (եպիլեպտիկ) բժշկել, ուրեմն բժիշկներ պետք չեն։ Ջրհորի ջուրը առանց որհնելու թույն կը դառնա, վատառողջ կը լինի։ Աղոթքով կարելի է անձրև քաշել ամպերից. աղոթքով պետք է գլուխ կնդել, վոր ցավ ու չոռ չը դիպչի և այլն և այլն։

Այս սոսկալի հակաքրիստոնեության դեմ բողոքում է քրիստոնեությունը, բողոքում մարդկային բանականությունը, բողոքում են բնության որենքները։

Այդպիսի սնահավատությունների պաշտպանությունը քաջալերություն է տգիտության և վնաս մարդկային կյանքի, վոր գիտությունից ոգտվել չը կամենա։

Մեկ խոսքով այդ ամենը խայտառակություն է, հեթանոսական վհկություն է, մոգություն է, վոր ծածկում են քրիստոնեական վառ քողով։

Կը հարցնեք ինչու են այս ամենը։ Վորովհետև այդ ամեն կանոններն առանձին առանձին վճարովի են, անաշխատ ապրուստի աղբյուր հոգևոր դասի համար։

Մեր այժմյան ըմբոստությունների ժամանակ, այդ ամենը՝ վորպես բիծ քրիստոնեական յեկեղեցու վրա, պետք է ընջվեն. բայց ավաղ նոր փարիսեցիություն, դրանց դեմ վոչ միայն ձայն չի լսվում, այլ քաջալերում է յեկեղեցին իր լռությամբ և նույն իսկ ներգործակերպ։

Վերջերս հանդես է յեկել մի նոր սնահավատություն, գլխավորապես Նոր-Բայազեդի շրջանում. այսպես անվանենք այդ սնոտի գործը՝ փահլևանների պաշտամունք։

Փահլևանները կամ քյանդրբազները խաղում են լարի վրա. թող խաղան. բայց ճառում են թե իրենց շնորհքը ստացել են սուրբ Կարապետից. նրա հետ կենդանի հարաբերության մեջ են, տեսիլքներում

տեսնում են նրան, խոսում նրա հետ, նրա կամքը հաղորդում են ժողովրդին և վայ նրան ով վոր ս. Կարապետի կամքը չի կատարի, ինչ պատիժ ասես կը թափվի վրան։ Ի՞նչ է նրա կամքը. մատաղ անել, ուխտ գնալ, փահլևանին լավ վարձատրել, աջհամբույր ու խաչհամբույր շատ տալ և այլն։ Ստեղծվում է մի սարսափ միամիտ ժողովրդի հոգիների մեջ, վոր խուժում է դեպի փահլևանը, դեպի ուխտատեղին, ուր փահլևանն է կապում իր լարը, մարգարեություններ անում. իսկ նրա «յալանչին», տակի մասնարեն սրախոսություններով «յոթն անվան տեր ս. Կարապետի» անունով, փող, մթերք, իրեր է հավաքում ամբոխից փահլևանի և իր ոգտին, վոր սուրբը Կարապետը մեղմանա և չը պատժի ժողովրդին։ Իսկ ուխտատեղիներում հունձ են անում հոգևորները։

Ավետարանից գիտենք մենք ս. Կարապետի կամքը, վոր փահլևանի հայտարարած կամքը չէ. այդ մեծ մարգարեն ապրում եր անապատում, հագնում կաշվեղեն, ուտում վայրի բանջար և քարոզում եր թե՝ ով յերկու շոր ունի, մեկը չունեցողին տա, ով ուտելու բան ունի, թող սովածին բաժին հանի, հարկահանները թող չը կողոպտեն ժողովրդին, զինվորները թող թալան չանեն, թագավորը թող լրբություն չանի, քահանաները թող չը խաբեն։ Ահա նրա կամքը։

Ախր եսպես ել նախատինք կլինի՞ վոր թափվում է քրիստոնեական կրոնի վրա, ս. Կարապետի վրա։ Ախր անարգվում է Մեծ մարդը, Հովհաննես Մկրտիչը, վոր իբր թե քյանդրբազին շնորհք տվող «աղեն» է։ Մթթե այնքան չնչին մարդ է յեղել ս. Կարապետը, վոր միայն լարախաղացության շնորհք է ունեցել և միայն այդ շնորհքն է տալիս։ Իսկ ցիրկերում, ուր ավելի ճարպիկ, զարմանալի խաղեր են անում ցիրկի մարդիկը, ձիյերը, վարժեցրած անասունները. բա նրանց

շնորհքն ով է տվել. և ինչ է քյանդրբազի շնորհքը նրանց շնորհքների առաջ։

Ա՛յդ, յեթե յեկեղեցին այսպես, ժողովուրդը տըգետ, շահագործվող, լարախաղացները շահագործող, ով է այդ վողորմելի ժողովրդի սրտացավ բարեկամը, վոր մոլորությունից հանի, անահավատությունից ազատի, վոր վոչ Քրիստոսի Ավետարանը, վոչ ժողովրդի բարեկեցությունը, վոչ բարոյականն ու կրթականը կուլ չը գնան այդ անապաշտության։

Հայ ժողովուրդ, մտածիր, խելքի յեկ, դուրս արի անապաշտությունից, մի խաբվիր, մի լսիր խաբեբաներին։ Քրիստոսն ու Հովհաննես Մկրտիչը քեզ ազատել են կամեցել սուտ պաշտամունքից, կախարդությունից, տգիտությունից և դու այսոր նրանց շնորհքն ես համարում այն, ինչ վոր նրանք անարգել են և հալածել։ Մի վիրավորիր նրանց անունը։

Հայ յեկեղեցական, մի անպատվիր քո կոչումը, դու լույսի առաքյալ ես համարվել, խավարի հետ մի գնա, մի քաջալերի անոտի պաշտամունքը մի քանի կոպեկ շահելու համար։ Ժամանակակից նոր սերունդը վոր ուսում է առնում, ծանոթանում է բնության յերևույթների և նրանց պատճառների հետ, իրավամբ քեզ կը ծաղրի, քեզ իբրև խավարասերի և խաբողի կը հալածի և կը գա ժամանակ, վոր դու ժողովուրդ ել չես ունենա, յեթե համառես խավարի մեջ մնալ և քաջալերող են լանին, վոր դու ել չես հավատում։

Քրիստոսը, Հովհաննեսը լույսի, ազատության, ճշմարտության արդարության առաքյալներ են. ով խարդախում է նրանց մեծ գործը, նա վոչ քրիստոնյա է, վոչ ոպտակար։

Թող կորչի խաբեությունը, թող կորչի անահավատությունը, թող կորչի դրանց քաջալերող փարիսեցի յեկեղեցականը, վոր խավարն ընդունում խեղճ ժողովրդի հոգու մաշարհում։